

ՏՐՏՈՒՄ ԱՍՐ

Ա.

Իրիկուն է. մըթընչաղի ըստուերներ
Մետաքսահիւս վարադոյրի պէս թեթեւ՝
Յուշիկ յուշիկ կը սքողեն ծովն ու տուններ
Ոսկեղջիւրի ամերուն վրայ տրտմահեւ:

Ու լոյսերանդն աղամանդեայ կը ծաղկի
Բարձունքներէն դէպի ցածիկէ հիւղերն հին,
Մարդիկ հապճեպ ունին իրենց մէջ գաղտնի,
Ու ձայներն ալ հետըզհետէ կը ցամքին:

Կը թանձրանայ մեր հողին ալ յեղակարծ՝
Եւ ի դուր ան վեր թեւածել կը փորձէ
Անպարազիծ մըշուշին մէջ բանտըւած:

Առանձնութիւն, հողույս դղեակ սատափէ,
Ուր կ'ամփոփուիմ զիս մանրեւու համակամ,
Տրտում յուշեր քաղելով հին անցեալէ:

Բ.

Լոյսե՛ր գունեղ, լոյսե՛ր ճարմանդ կը պըլլալան
Խաւարին մէջ նստած թշուառ քաղքին վրայ,
Ու մեղկօրօր շէրքիներու ծանրաձայն
Այեծըփանքը կ'օրօրուի ու կու լայ:

Ու չեմ գիտեր ինչո՞ւ տաղտուկն ու վախ սին
Կը ճնշէ իմ հողին անկեղծ կարօտով
Լուսակայլակ ապրումներու բաժակին,
Ուր գառնութեան չըկար մըրուր կամ խըռով:

Ձըւարթ կանչեր ու գալարուած խուլ ձայներ
Կը խըռովեն գիշերուան պահն անդորրիկ
Դաւ ու պատրանք միշտ ցանկելով չորս կողմեր:

Աղմուկին մէջ կը մեռնի սէրը քաղցրիկ՝
Փարթամութիւնն հողիներու երազկոտ,
Ալլաի էֆպէրն ու վոսփորի ջինջ ալիք:

Պոլիս, 1954

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

ԹՇՈՒԱՌ ԱՆԻՔՆԵՐ

Լայն ու հնչուն բաւիղներէն քաղաքին,
Ալիքներու պէս շառաչուն
Կը թաւալին տառապանքով կամ զըւարթ՝
Բաղմութիւններ ուղիներով անծանօթ...
Ցայտքեր կամքի, եւ վճռական քայլերու
Մայթերու վրայ կը թնդան...

Կը հալածուի մարդն իր եսէն վերաւոր
Եւ կը վանէ յաջադկոտ՝
Արդարութիւնն, իրաւունքներ խածնելով.
Եւ անդադար
Անվերջալոյս երազներու ի խնդիր
Կ'արբենայ ի՛ր սիրով, կըքով բռնաւոր:

Եւ աւա՛ղ, օր մըն ալ որպէս սին բեկոր
Կ'ըլլայ ընկեր հողին, նրման տերեւին,
Թօթափելով եսն ապիկար, աղաղո՛ւն:
Ու կը յորդէ այսպէս անդու անընդհատ
Մարդկային գետն արեւուն տակ հըրակաթ,
Կամ շուքին տակ մահիկին,
Յօղելով վար կարմիր շիթեր արիւնի:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

Պոլիս, 1954